



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն 2**

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝  
2020 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՌՑԱՆՑ ՆԻՍՏԻ**

**Օրակարգում՝**

1. ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի հեռակա բաժնի ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցերը:
2. Ընթացիկ հարցեր:

Բացելով առցանց կայացող նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանն ասաց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի 37 անդամներից առցանց նիստին մասնակցում է 27-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցին, որի քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

Գիտխորհուրդն այնուհետև անցավ օրակարգի **1-ին հարցին**, և սկսվեց հեռակա բաժնի ասպիրանտների և հայցորդների ատեստավորումը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** – ք. գ. դ., պրոֆեսորներ Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ս. Մուրադյանը, Ա. Աբաջյանը, Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, Բ. գ. թ., դոցենտներ Վ. Եղիազարյանը, Ն. Դիլբարյանը, Ս. Գրիգորյանը, Ա. Ջրբաշյանը և ուրիշներ:

**Լ Ս Ե Ց Ի Ն** – ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի՝ ակադեմիկոս Հրանտ Թամբազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի՝ 2017 թ. հայցորդ **Լևոն Օնիկի Ալոյանի** ատեստավորման հարցը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** – բ. գ. դ., պրոֆեսորներ Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Վ. Սաֆարյանը և բ. գ. թ., դոցենտ Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ հայցորդի թեկնածուական ատենախոսության թեման է «Պատմության թեման արևմտահայ ռոմանտիկական արձակուրդ»՝ բ. գ. դ., պրոֆեսոր Ալ. Մակարյանի գիտական ղեկավարությամբ: 2018-2019 ուստարում թեմային առնչվող նյութերի հավաքագրմանը զուգահեռ հանձնել է կրեդիտային համակարգով նախատեսված պարտադիր առարկաներից բոլոր քննությունները: 2019 թ. մայիսին հանձնել է որակավորման քննություն «Ինֆորմատիկա» առարկայից: 2020 թ. ևս մեկ տարով երկարացրել է հայցորդության ժամկետը (հրաման՝ 31/69 20.02.2020թ. ):

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Ատեստավորել Լևոն Օնիկի Ալոյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն – ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի՝ ակադեմիկոս Հրանտ Թամ-րազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի՝ 2017 թ. հայցորդ Հայկ Արարատի Հովհաննիսյանի ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – բ. գ. դ., պրոֆեսորներ Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Վ. Սաֆարյանը և բ. գ. թ., դոցենտ Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ Հ. Հովհաննիսյանը 2017 թվականին հեռակա ուսուցմամբ ընդունվել է ասպիրանտուրա ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնում ԲՈԿ-ի (նախկինում՝ ԲՈՀ) անվանացանկին համապատասխան «Հայ դասական գրականություն (Ժ. 01.01)» մասնագիտությամբ: Թեկնածուական ատենախոսության թեման է «Զապել Եսայանի պատումի արվեստը»՝ բ. գ. դ., պրոֆ. Ալ. Ա. Մակարյանի գիտական ղեկավարությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Հ. Հովհաննիսյանը շարունակել է գիտահետազոտական աշխատանքների կատարումը, մասնավորապես ուսումնասիրել է «Հայաստանի ազգային արխիվում» պահպանվող շուրջ մեկ տասնյակ արխիվային ֆոնդեր, որտեղ առկա են տեղեկություններ Զապել Եսայանի՝ Կիլիկիայում և Խորհրդային Հայաստանում ծավալած գործունեության վերաբերյալ, Եսայանի դատական գործը, որը 1990-ականների սկզբներին նախկին ՊԱԿ-ի արխիվից ԽՍՀՄ փլուզման կապակցությամբ գաղտնագերծվել և անցել է պե տական պահպանության: Ուսումնասիրել է նաև գրականության և արվեստի թանգարանում գտնվող՝ Զապել Եսայանի և նրան առնչակից մի քանի ֆոնդեր, որոնց արդյունքում տպագրության է պատրաստել գիտական 3 հոդված, որոնք այժմ տպագրման փուլում են.

1. «Ժամանակաշրջանը և մարդիկ Զ. Եսայանի «Կրակե շապիկը» վիպակում
2. « Խորհրդային Հայաստանը և Զ. Եսայանի գեղարվեստը»
3. «Զ. Եսայանի նորավեպերը»

Առաջիկա ժամանակահատվածում պատրաստվում է կատարել փաստաթղթային որոնումներ Եսայանի ողբերգական մահվան առեղծվածը բացահայտելու, ինչպես նաև Եսայանի և այլ հեղինակների (մասնավորապես Սիամանթոյի) գրական առնչությունները պարզելու կապակցությամբ: Աշխատանքների հաջող ընթացքի դեպքում արդյունքները կհրատարակվի գիտական

հողվածների տեսքով:

Հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է ասպիրանտի համար նախատեսված մի քանի դասընթացների, որի արդյունքում ուսումնական կիսամյակի ավարտին կստանա անհրաժեշտ կրեդիտների մի մասը:

Առաջիկայում նախատեսված աշխատանքների՝ նախապատրասված ժամանակացույցով և ակնկալվող արդյունքով կատարվելու դեպքում սահմանված ժամկետի ավարտին՝ 2021 թվականի հոկտեմբերին, ատենախոսությունը կներկայացվի հրա պարակային պաշտպանության:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - Որոշեցին ատեստավորել **Հայկ Արարատի Հովհաննիսյանին:**

**Լ Ս Ե Ց Ի Ն** – ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի՝ ակադեմիկոս Հրանտ Թամ-րազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի՝ 2017 թ. **հայցորդ Գրետա Հայկի Գասպարյանի** ատեստավորման հարցը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** – բ. գ. դ., պրոֆեսորներ Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Վ. Սաֆարյանը և բ. գ. թ., դոցենտ Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ Գ. Գասպարյանը 2017 թվականի հոկտեմբերի 11-ին ձևակերպվել է հայցորդ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ակադ. Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնում: Գիտական ատենախոսության թեման է «Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունը Արևելքի և Արևմուտքի գրական գուգահեռներում»: Գիտական ղեկավար է նշանակվել դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանը: 2019 թվականի նոյեմբերից մինչև 2020 թվականի նոյեմբերն ընկած ժամանակահատվածում ուսումնասիրել է թեմային վերաբերող օտարալեզու տեսական գրականություն (ռուսերեն, անգլերեն) Արևելքի մի շարք ժողովուրդների կրոնական, փիլիսոփայական ուսմունքների մասին: Խորությամբ ուսումնասիրել է Ավետիք Իսահակյանի գիտական կենսագրությունը: Ավարտել է երկրորդ հոդվածը, որ վերաբերում է Իսահակյանի՝ հնդկական գրականությանն ու մշակույթին առնչվող ստեղծագործություններին, որ կներկայացնի տպագրության: Ռուսերեն թարգմանված կարդացել է պարսկական գրականություն՝ գտնելով կապերը Իսահակյանի՝ պարսկական գրականությանն ու մշակույթին առնչվող ստեղծագործությունների հետ:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - Որոշեցին ատեստավորել **Գրետա Հայկի Գասպարյանին:**

**Լ Ս Ե Ց Ի Ն** – ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի՝ ակադեմիկոս Հրանտ

Թամ- րագյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի՝ 2017 թ. հեռակա ուսուցմամբ ասպիրանտ **Աննա Վարդանի Ստեփանյանի** ատեստավորման հարցը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** – ք. գ. դ., պրոֆեսորներ Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Վ. Սաֆարյանը, և ք. գ. թ., դոցենտ Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ ասպիրանտը զբաղվել է թեմային առնչվող նյութերի հավաքագրման աշխատանքներով: Ուսումնասիրել է հայ միջնադարյան քնարերգությունը, աղբյուրագիտական և տեսական աշխատություններ:

2020 թվականի ընթացքում տպագրման է հանձնել թեմային վերաբերող երկու հոդված: ԲՈԿ-ի կողմից սահմանված պարբերականներում տպագրվել է թեմային առնչվող երեք հոդվածներ, չորրորդը գտնվում է տպագրման ընթացքի մեջ: Հոդվածներն ունեն հետևյալ վերտառությունները՝ «Թեմատիկ և նկարագրական ընդհանրությունները 12-14-րդ դարերի հայ և ֆրանսիական քնարերգության մեջ», «Կյանքի ու մահվան, ազատության ու կամքի փիլիսոփայական խորհուրդը Հովհաննես Մարկավազի «Բան իմաստութեան...» փիլիսոփայական պոեմում», Վարդի և սոխակի մոտիվի ուշմիջնադարյան խորհրդանշանային ընկալումները», «Ստեղծագործելու շնորհի անհատական և կանոնական ընկալումների դրսևորումը հայ միջնադարյան քնարերգության մեջ»:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - Որոշեցին ատեստավորել **Աննա Վարդանի Ստեփանյանին**:

**Լ Ս Ե Ց Ի Ն** – ԵՊՀ գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի հեռակա ասպիրանտ **Նոանե Բաբկենի Սարոյանին** ատեստավորելու հարցը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** – ք. գ. դ., պրոֆեսորներ Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը և դոցենտ Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ Ա. Սարոյանը ասպիրանտուրայի երկրորդ կուրսի ընթացքում գրել է 6 հոդված, որոնցից չորսը ուղարկել է տպագրության: Այդ հոդվածների վերնագրերն են՝ «Բանաստեղծական կայուն ձևերը Չոպանյանի պոեզիայում» (Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն), «Թումանյանական քառյակի տաղաչափական առանձնահատկությունները» (Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Ա), «Կողայով սոնետը արևմտահայ պոեզիայում» (Գրականագիտական հանդես), «Հանգերի առանձնահատկությունները Չարենցի քառյակներում» (Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Բ): Մյուս երկու հոդվածները վերաբերում են Չարենցի հեղինակած

բեյթերին ու գազելներին և մոտավոր հանգերի յուրահատկություններին: Ընթացքի մեջ է նաև թեզի ամբողջական շարադրանքը գործընթացը, մշտական կապի մեջ է իր գիտական ղեկավարի հետ:

Ամբիոնի վարիչ դոց. Ա. Ջրբաշյանն ասաց, որ ասպիրանտը լրջորեն աշխատում է «Բանաստեղծության կայուն ձևերը 20-րդ դարի հայ պոեզիայում» թեմայով ատենախոսության վրա, հետաքրքրված է իր նյութը լավագույնս ներկայացնելու, արդեն տպագրության է ներկայացրել չորս հոդված, որոնք մինչև հունվար լույս կտեսնեն, երկու հոդված էլ պատրաստ են, նաև շարադրում է բուն ատենախոսությունը: Պրոֆ. Ժ. Քալանթարյանը նշեց, որ Ն. Սարոյանն ակտիվորեն մասնակցում է ամբիոնի աշխատանքներին, պատրաստակամ է ուսումնական գործընթացին ցանկացած օգնություն ցուցաբերելու:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - Որոշեցին ատեստավորել **Նճանե Բարկենի Սարոյանին** :

**Լ Ս Ե Ց Ի Ն** - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (հեռակա ուսուցում) **Սարին Ագապաշ Բուզանդի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց., դոց. Լ. Թելյանը, Բ. Ներսիսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Սարին Ագապաշը 2018 թ. ավարտել է պատմության ֆակուլտետի սփյուռքագիտության ամբիոնի մագիստրատուրան «Հայագիտություն» մասնագիտացմամբ, 2019 թ. հանձնել է ընդունելության քննությունները և ընդունվել ասպիրանտուրա (հեռակա ուսուցում) «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01): Ատենախոսության թեմա է հաստատվել «**Արդի արևմտահայերենի կանոնարկման հիմնախնդիրները**» (Ժ.02.01 «Հայոց լեզու»), ղեկավար՝ պ. գ. դ., դոց. Հակոբ Չոլաքյան: Սարին Ագապաշը 2019–2020 ուստարում ավարտել է «Գիտության փիլիսոփայություն», «Մասնագիտական օտար լեզու (ակադեմիական գրագրություն)», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Մանկավարժություն և հոգեբանություն» պարտադիր, «Գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում», «Սարդկային և նյութական ռեսուրսների կառավարում» ընտրովի դասընթացները և ստացել է համապատասխան կրեդիտներ:

Տպագրության է պատրաստել երկու հոդված՝ «Արևմտահայերենի ուսուցումը պոլսահայ արդի դպրոցին ներս» և «Պոլսոյ «Քուլիս» և «Ակօս» պարբերաթերթերու

«Լուցիքա Տուտու» սինակի խօսակցական արեւմտահայերէնի մասին»: Այժմ շարադրում է «Արդի արեւմտահայերէնի բայական խնդրառութիւնը» հոդվածը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Սարին Ագապաշին** ատեստավորել:

**ԼՍԵՑԻՆ** - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (հեռակա ուսուցում) **Հռիփսիմե Սուրենի Սարգսյանի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, դոց. Լ. Թելյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Հռիփսիմե Սարգսյանը 2017 թ. ընդունվել է ասպիրանտուրա (հեռակա ուսուցում) «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01):

Ատենախոսության թեմա է հաստատվել **«Ժամանակակից հայերենի բայի խոնարհման հարացույցը (ուսումնասիրության և ուսուցման հիմնախնդիրները հանրակրթական դպրոցում)»** (Ժ.02.01 «Հայոց լեզու»), **ղեկավար՝ Բ.Գ.Դ., պրոֆ. Յուրի Ավետիսյան:** Հռիփսիմե Սարգսյանը 2019–2020 ուստարում լրացրել է մասնագիտական պրակտիկայի ծրագրով նախատեսված ժամաքանակը: Ավարտել է «Գիտության փիլիսոփայություն», «Մասնագիտական օտար լեզու (ակադեմիական գրագրություն)» «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Մանկավարժություն և հոգեբանություն» պարտադիր, «Գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում», «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում» ընտրովի դասընթացները և ստացել է համապատասխան կրեդիտներ: Տպագրության է պատրաստել «Անցյալ կատարյալը ժամանակակից հայերենում և դրա ուսուցումը» թեմայով հոդված: Ուսումնասիրել է տեսական գրականությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Հռիփսիմե Սարգսյանին** ատեստավորել:

**ԼՍԵՑԻՆ** - Հայ նորագույն գրականության ամբիոնի հեռակա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ **Աստղիկ Արարատի Օհանյանի** հաշվետվությունը և ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Գաբրիելյանը, Ալ. Մակարյանը, դոց., դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ Աստղիկ Օհանյանի թեկնածուական ատենախոսության թեման է՝ «Հովհաննես Գրիգորյանի պոետիկան», գիտական ղեկավարն է բան. գիտ. թեկն., դոց. Ս. Գրիգորյանը:

Նա մասնակցել է պարտադիր («Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն», «Մասնագիտական օտար լեզու», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ») և կամընտրական («Մանկավարժություն և մտավոր սեփականության իրավունք») դասընթացների՝ հանձնելով ստուգարքները: Այժմ մասնակցում է «Հնգեբանության» և «Գիտության փիլիսոփայության» դասընթացներին:

Ատենախոսության թեմայի հետ կապված՝ ուսումնասիրում է տեսական նյութեր և արխիվներ:

**ՈՐՈՇԵՑԻՆ. – Աստղիկ Օհանյանին ատեստավորել:**

### **Ընթացիկ հարցերում՝**

**Լ Ս Ե Ց Ի Ն** – ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի՝ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի՝ 2020 թ. առկա ասպիրանտ **Մանե Դավթի Դանիելյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Ց Տ Վ Ե Ց Ի Ն** – բ. գ. դ., պրոֆեսորներ Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Վ. Սաֆարյանը, և բ. գ. թ., դոցենտ Ռ. Էլոյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ հաշվի առնելով ասպիրանտի գիտական նախասիրություններն ու գիտատեսական պատրաստվածության աստիճանը՝ նպատակահարմար է նրան առաջարկել հայ նոր գրականության երևելի դեմքերից մեկի՝ Բաֆֆու ստեղծագործության մեջ էական դեր ունեցող կնոջ կերպարի ուսումնասիրությունը: Թեմայի ընտրությունը նախ՝ պայմանավորված է նրանով, որ Բաֆֆու մասին գիտական վերջին լրջմիտ խոսքը՝ մենագրության տեսքով, արդեն ունի տասնամյակների վաղեմություն, հետո՝ բավական ուշարժան են այս հեղինակի ըմբռնումները կնոջ ազգային ու հասարակական դերի մասին թե՛ հրապարակախոսության և թե՛ գեղարվեստական երկերում: Առաջարվող թեման, ի դեպ, չի դարձել առանձին ուսումնասիրության նյութ: Թեման միաժամանակ արդիական է, քանի որ առհասարակ կնոջ արժևորումը ժամանակակից գրականագիտության հիմնախնդիրներից է:



Նշվեց, որ նպատակահարմար է աշխատանքի գիտական ղեկավար առաջարկել Բ. Գ. Ղ., պրոֆ. Ալ. Մակարյանին, որը տարիների ընթացքում Մ. Դանիելյանին հատկացրել է հատուկ ուշադրություն, հոգածությամբ աճեցրել է նրան՝ միաժամանակ ղեկավարելով թե՛ ավարտական աշխատանքը և թե՛ մագիստրոսական թեզը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - 1. ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի՝ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի՝ 2020 թ. առկա ասպիրանտ **Մանե Դավթի Դանիելյանի** թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «**Կնոջ ազգային և հասարակական դերի ըմբռումը՝ ըստ Բաֆֆու**» ժ 01. 01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտության գծով:

2. Ատենախոսության գիտական ղեկավար հաստատել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ալբերտ Արշավիրի Մակարյանին**:

**Լ Ս Ե Ց Ի Ն** - ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի՝ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի՝ 2017 թ. հեռակա ասպիրանտ **Հայկ Արարատի Հովհաննիսյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի վերափոխման և հաստատման հարցերը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** - Բ. Գ. Ղ., պրոֆեսորներ Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Վ. Սաֆարյանը, և Բ. Գ. Թ., դոցենտ Ռ. Էլոյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ ասպիրանտը արդեն տևական շրջան աշխատում է Զապել Եսայանի պատումի արվեստի ուսումնասիրության վրա և հասել է զգալի արդյունքների, որոնց արտահայտություններն են արդեն լույս տեսած մի քանի հոդվածները: Աշխատանքի ընթացքը, սակայն, ըստ գիտական ղեկավարի՝ Բ. Գ. Ղ., պրոֆ. Ալ. Մակարյանի ու ասպիրանտի, հանգեցրել է այն համոզման, որ ատենախոսության հեղինակին ավելի հոգեհարազատ է երևելի գրագիտուհու հատկապես վիպաշխարհի քննությունը, ուստի որևէ մեղանշում չի լինի նախկին թեման փոքր-ինչ ձևափոխելու պարագայում:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի՝ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի՝ 2017 թ. հեռակա ասպիրանտ **Հայկ Արարատի Հովհաննիսյանի** թեկնածուական ատենախոսության թեման վերափոխել և հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «**Զապել Եսայանի վիպաշխարհը**»՝ դարձյալ ժ 01. 01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտության գծով:

**ԼՍԵՑԻՆ** - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում) **Լիլիթ Հմայակի Ծատուրյանի** ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Ա. Տեր-Մինասյանը, Լ. Թելյանը, Բ. Ներսիսյանը և ուրիշները:

Նշվեց, որ Լիլիթ Ծատուրյանը 2020 թ. ավարտել է հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրան, հանձնել է ընդունելության քննությունները և ընդունվել ասպիրանտուրա (առկա ուսուցում)՝ «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01):

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Լիլիթ Ծատուրյանի** ատենախոսության թեմա հաստատել «Բառաքերականական փոխակերպումները ռուս-հայերեն թարգմանություններում» (Վ. Պիկուլ, «Ֆավորիտ»)» (Ժ.02.01 «Հայոց լեզու»):

2. Լիլիթ Ծատուրյանի ատենախոսության գիտական ղեկավար հաստատել Բ. Գ. դ., պրոֆ. Յուրի Ավետիսյանին:

**ԼՍԵՑԻՆ** - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում) **Հաջար Ռեզայի Մումենիի** ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Ա. Տեր-Մինասյանը, Լ. Թելյանը, Բ. Ներսիսյանը և ուրիշները:

Նշվեց, որ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Հաջար Մումենիին ԵՊՀ-ի և Սպահանի (Իրանի) համալսարանի միջև համագործակցության պայմանագրի շրջանակներում 2020 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01):

**ՈՐՈՇԵՑԻՆ** - 1. Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Հաջար Մումենիի** ատենախոսության թեմա հաստատել «Իրանական փոխառությունների իմաստակառուցվածքային զարգացումը հայերենում» (Ժ.02.01 «Հայոց լեզու»):

2. Հաջար Մումենիի ատենախոսության գիտական ղեկավար հաստատել Բ. Գ. դ., դոց. **Փառանձեմ Մեյթիխանյանին**:

**ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**